4ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

**STATE REVENUE COMMITTEE**
**OF THE GOVERNMENT OF THE REPUBLIC OF ARMENIA**
**HEAD OF STAFF**

**0015 Երևան, Մ. Խորենացու 3**
**0015 Yerevan, M. Khorenatsi 3**
**Հեռ./Tel. +3741 59 43 01**
**Ֆաքս/Fax +3741 53 64 00**

№ 33455/18 « 18 » 12 2008 թ.

ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
ղեկավար պրն. Ա. Շահնազարյանին

Հարգելի պարոն Շահնազարյան

Կից ներկայացնում ենք ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար մեկ անձից գնման ձևով կազմակերպված ամանորյա նվերների, հուշանվեր ժամացույցերի ձեռքբերման, ամանորյա միջոցառման կազմակերպման ծառայությունների գնման ընթացակարգի արձանագրությունները:

Առդիր 142 թերթ:

Մ/Ծ ՓՈԽԳՆԴԱՊԵՏ Ա.ՍԵԴՐԱԿՅԱՆ

Կատ.Գ.Ղազարյան
Հեռ. 594-626

9614-09

«18» դեկտեմբերի 2009թ. Կ.Տ.

**ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

1. Հիմնական տեղեկություններ գնման մասին

1.1. Պատվիրատուի

**Անվանումը՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե**

1.2. Գնման առարկայի տեսակը

ապրանք ☒

1.3. Կարիքի բավարարման միջոցը

գնում ☒

1.4. Գնման առարկայի համառոտ նկարագիրը՝ **Ամանորյա նվերներ /հուշանվեր ժամացույցեր/**

1.5. Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած անձի

Անվանումը՝ **«Տերմինալ Պահեստ» ՍՊԸ**

1.6. Կնքված գնման պայմանագրի (կցվում է)

Ծածկագիրը՝ **ԱՊՁԲ-47**
Կնքման ամսաթիվը՝ **2009թ. դեկտեմբերի 18ը**
Գործողության ժամկետը՝ **մինչև պայմանագրով ստանձնած կողմերի պարտավորությունների ողջ ծավալով կատարումը**
Գինը՝ **21261000/քսանմեկ միլիոն երկու հարյուր վաթսունմեկ հազար/ դրամ:**

1.7. Գնման ֆինանսավորման աղբյուրը՝ **ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի արտաբյուջետային միջոցներ**

2. Գնման գործընթացի նախապատրաստումը

2.1. Գնման պահանջի ծագման

**Իրավական հիմքը՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի նախահաշվի փոփոխության հաստատման օր**
**Օրը, ամսաթիվը՝ 03.12.09թ.**

2.2. Պատվիրատուի ղեկավարը սահմանել է՝

Պատասխանատու ստորաբաժանում

Անվանումը՝ Գործերի կառավարման վարչություն

2.3. Մեկ անձից գնման ձևի կիրառման պայմանն ըստ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23 հոդվածի համապատասխան կետի՝

V արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակի առաջացման հետևանքով ծագել է գնման անհետաձգելի պահանջ և գնման այլ ձևի կիրառումը՝ ժամկետի առումով անհնար է, պայմանով որ նման պահանջը հնարավոր չէր կանխատեսել, ինչպես նաև եթե գնման առարկան ներառված չէ պարբերական մրցույթով կնքված պայմանագրերում.

2.4. Մեկ անձից գնման ձևի կիրառման ընտրված պայմանի հիմնավորումը

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2009 թվականի աշխատանքային գործունեության, այդ թվում բյուջետային մուտքերի հավաքագրելիության և հարկային և մաքսային վարչարարության կատարելագործման բարեփոխումների ծրագիրը հաջողությամբ իրականացնելու համար աշխատակազմի աշխատակիցներին խրախուսելու նպատակով նախատեսվում է տալ ամանորյա նվերներ/հուշանվեր ժամացույցեր/: Ամանորյա նվերները ձեռքբերելու անհրաժեշտությունից ելնելով մինչև դեկտեմբերի-29ը առաջացել է վերոհիշյալ ապրանքների գնման պահանջ, ինչով պայմանավորված 03.12.09թ. փոփոխություն է կատարվել ՀՀ ԿԱ ՊԵԿ նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի նախահաշվում և այդ միջոցներից ամանորյա նվերների ձեռքբերման նպատակով հատկացվել է ՀՀ ֆինանսների նախարարության /16.12.09թ. 13/13-683-8446/ 21261000 դրամ, ինչպես նաև առկա է հրատապության հիմքով պայմանավորված մեկ համաձայնությունը, որպեսզի գնումները իրականացվեն հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնման ձևով.: Հաշվի առնելով ամանորյա նվերների ձեռքբերման նպատակով գնման այլ ձևերի կիրառման ժամկետայնության հանգամանքը, գնման գործընթացը կազմակերպվել է մեկ անձից գնման ձևով:
Միաժամանակ առկա է պատասխանատու ստորաբաժանման գրավոր հայտարարությունը այն մասին, որ 18.12.09թ. կնքված ԱՊՁԲ-47 գնման պայմանագրի թիվ-1 հավելվածով նախատեսված տվյալ բնույթով տեղական արտադրության հուշանվեր ժամացույցերի ձեռքբերումը հնարավոր չէ:

3. Գնման պայմանագրի կնքումը

3.1. Գնման պայմանագիրը կնքելու նպատակով պատվիրատուի առաջարկը ներկայացնելու միջոցը՝

Մեկ անձին պայմանագիր կնքելու առաջարկի ներկայացում V

3.2. Տեղեկություններ այն անձանց (անձի) մասին որոնց ուղարկվել է պատվիրատուի առաջարկը.

| N | Անվանումը (անունը, ազգանունը) | Հասցեն | Ներկայացված առաջարկի հիմքը գրության համարը և ամսաթիվը (նշվում է) |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| 1 | «Տերմինալ Պահեստ» ՍՊԸ | ք.Երևան, Սայաթ-Նովա 19/9 | 17.12.09թ. թիվ-33402/18 |

3.3. Տեղեկություններ պատվիրատուի առաջարկը ընդունած անձանց վերաբերյալ.

| N | Անվանումը (անունը, ազգանունը) | Հասցեն | Առաջարկը ընդունելու հիմքը՝ գրության համարը և ամսաթիվը |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| 1 | «Տերմինալ Պահեստ» ՍՊԸ | ք.Երևան, Սայաթ-Նովա 19/9 | 18.12.09թ. |

3.4. Տեղեկություններ պատվիրատուի կողմից մերժված առաջարկությունների վերաբերյալ.

Մերժե՞լ է Պատվիրատուն որևէ առաջարկ այն պայմանագրի կնքման նպատակով մասնակցին ուղարկված գրությամբ սահմանված կարգի խախտմամբ ներկայացված լինելու պատճառով.

Այո ☐ Ոչ ☒

Մերժե՞լ է պատվիրատուն որևէ առաջարկ այն պատճառով, որ առաջարկը ներկայացրած մասնակիցը սահմանված կարգով չի հավաստել գնումներին մասնակցության իր իրավունքը.

Այո ☐ Ոչ ☒

Մերժե՞լ է պատվիրատուն որևէ առաջարկ այն պատճառով, որ առաջարկը ներկայացրած մասնակիցը սահմանված կարգով չի հավաստել որակավորման իր տվյալները

Այո ☐ Ոչ ☒

3.5. Բանակցություններ
Պատվիրատուն վարե՞լ է բանակցություններ

Այո ☐ Ոչ ☒

4. Կասեցում
Կասեցրե՞լ է պատվիրատուն գնման գործընթացը.

Այո ☐ Ոչ ☒

5. Բողոքարկում
Ստացե՞լ է պատվիրատուն գնման գործընթացի հետ կապված որևէ բողոք.

Այո ☐ Ոչ ☒

Բողոքարկվե՞լ են պատվիրատուի գործողությունները լիազոր մարմնին.

Այո ☐ Ոչ ☒

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

**STATE REVENUE COMMITTEE**
**OF THE GOVERNMENT OF THE REPUBLIC OF ARMENIA**
**HEAD OF STAFF**

0015 Երևան, Մ. Խորենացու 3
0015 Yerevan, M. Khorenatsi 3
Հեռ./Tel. +3741 59 43 01
Ֆաքս/Fax +3741 53 64 00

N 33402/12 «17» 12 2009

*«Տերմինալ Պահեստ» ՍՊԸ*

*տնօրեն Հ.Սանուկյանին*

*Հարգելի պարոն Սանուկյան*

*ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի աշխատակիցներին խրախուսելու նպատակով նախատեսվում է ձեռքբերել հուշանվեր ժամացույցեր:*

*«Տերմինալ Պահեստ» ՍՊԸ-ին առաջարկվում է մատակարարել վերոհիշյալ ապրանքները:*

*Գնումները ֆինանսավորվելու են ՀՀ ԿԱ ՊԵԿ արտաբյուջետային միջոցներով այդ նպատակի համար նախատեսված հատկացումների հաշվին և գնման ընդհանուր գինը չի կարող գերազանցել այդ գնումների ֆինանսավորման համար նախատեսված հատկացումների չափը:*

*Գնումներին մասնակցելու համար պատվիրատուին պետք է ներկայացվի հաստատված և ստորագրված հայտարարություն այն մասին, որ «Տերմինալ Պահեստ» ՍՊԸ-ն*
*ունի գնման հայտով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, մասնագիտական հատկանիշներ, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ,*
*դատական կարգով անվճարունակ չի ճանաչվել,լուծարման գործընթացում չի գտնվում,*
*գնման հայտի կատարման համար անհրաժեշտ գույքը արգելանքի տակ չի գտնվում,*
*կամ նրա ղեկավար մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում չպետք է*
*1.դատապարտված լինի տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է,*
*2.գնման պայմանագիր կնքելու նպատակով ներկայացրած լինի կեղծ տվյալներ,*
*3.իր գործողությամբ կամ անգործությամբ խախտած լինի գնման պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրած լինի պատվիրատուի կողմից գնման պայմանգրի միակողմանի լուծմանը:*

*Համաձայնության դեպքում խնդրում ենք ներկայացնել սույն գրության մեջ նշված հայտարարությունը տեղեկություն ծագման երկրի մասին և գնային առաջարկը:*
*Միաժամանակ,կից ներկայացնում ենք գնման պայմանագրի նախագիծը:*

**Ս/Ծ ՓՈԽԳՆԴԱՊԵՏ** [signature] **Ա.ՍԵԴՐԱԿՅԱՆ**

**ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N -ԱՊՁԲ-47**
**Հուշանվեր ժամացույցերի մատակարարման**
**Նախագիծ**

**ք. Երևան** **«   » ----------------- 2009թ.**

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն, այսուհետ՝ «Գնորդ», ի դեմս ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա.Սեդրակյանի, մի կողմից, և «        » -ն, այսուհետ՝ «Մատակարար», ի դեմս --------------------------------ի, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

1.1 Մատակարարը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին հանձնել սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող **թիվ 1 հավելվածով** նախատեսված հուշանվեր ժամացույցեր՝ /այսուհետև՝ «Ապրանք»/, իսկ Գնորդը պարտավորվում **է** ընդունել այդ ապրանքը և վճարել դրա համար:

1.2. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված ապրանքի մատակարարման ժամկետն է պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 29.12.2009թ. ներառյալ:

1.3. Մատակարարի կողմից Գնորդին մատակարարված Ապրանքը պետք է լինի չօգտագործված:

## 2.ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1. Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1. Ցանկացած ժամանակ ստուգել Մատակարարի կողմից Ապրանքի մատակարարման ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Մատակարարի գործունեությանը.

2.1.2. Միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Մատակարարի կողմից մատակարարված Ապրանքը չի համապատասխանում սույն պայմանագրի թիվ 1 հավելվածով նախատեսված պահանջներին և /կամ/ խախտվել է Ապրանքի մատակարարման ժամկետը և Ապրանքը չի կարող մատակարարվել Գնորդի համար ընդունելի ժամկետում:

2.1.3. Չընդունել Ապրանքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին համապատասխան, սույն պայմանագրի 1.1. կետի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անվճար վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Մատակարարից վճարելու սույն պայմանագրի 5.2. և 5.3. կետերով նախատեսված տուգանքը և տույժը:

2.1.4. Մինչև Ապրանքը Գնորդին մատակարարելը հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ Մատակարարին հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները՝ այդ մասին առնվազն 10 օր առաջ տեղեկացնելով Մատակարարին:

2.1.5 Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների կատարման վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև սույն պայմանագրի կնքումը Մատակարարը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ) կամ Մատակարարին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, ապա, այդ հիմքերը ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել սույն գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև սույն պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային սույն պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Մատակարարի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Մատակարարը պարտավոր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել Պատվիրատուի կրած վնասները, այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը սույն պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

**2.2. Գնորդն պարտավոր է՝**

2.2.1. Ուսումնասիրել և ընդունել սույն պայմանագրի պահանջներին համապատասխան մատակարարված Ապրանքը, իսկ մատակարարման արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Մատակարարին:

2.2.2. Մատակարարին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ այդ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5. կետով նախատեսված տույժը:

**2.3. Մատակարարն իրավունք ունի՝**

2.3.1. Գնորդից պահանջել ընդունելու սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքը:

2.3.2. Մինչև Գնորդին Ապրանքի մատակարարելը, հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ Գնորդին հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները՝ այդ մասին առնվազն 10 օր առաջ տեղեկացնելով Գնորդին:

2.3.3. Գնորդի կողմից սույն պայմանագրի 4.2. կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Գնորդից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 5.5. կետով նախատեսված տույժը:

2.4. Մատակարարն պարտավոր է՝

2.4.1. Սույն պայմանագրով սահմանված պայմաններով ապահովել Ապրանքի մատակարարումը՝ ղեկավարվելով ՀՀ գործող օրենսդրությամբ:

2.4.2. Սույն պայմանագրի 2.1.2. կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Գնորդին պատճառված վնասները:

2.4.3. Սույն պայմանագրի 2.1.3. կետով նախատեսված դեպքում Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում անվճար ապահովել թերությունների վերացումը և Գնորդին վճարել պայմանագրի 5.2. կետով նախատեսված տուգանքը:

2.4.4. Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2. և 5.3. կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

## 3. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Մատակարարը Ապրանքի մատակարարման ավարտից հետո հաջորդ աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ:

3.2. Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Մատակարարին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.3. Մատակարարի կողմից մատակարարված Ապրանքը Գնորդի կողմից ընդունված է համարվում հանձնման-ընդունման արձանագրությունը երկկողմանի ստորագրելու/հաստատելու/ պահից:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ և ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Սույն պայմանագրի ընդհանուր գինը , ներառյալ ԱԱՀ-ն, կազմում է ----------------------------------- /-------------------------------------------/ ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով իրականացվող բոլոր ծախսերը, այդ թվում՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հարկերը, պարտադիր այլ վճարները:

4.2. Գնորդը ապրանքի դիմաց Մատակարարին վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Մատակարարի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա ՝ հինգ բանկային օրվա ընթացքում:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Մատակարարը պատասխանատվություն է կրում մատակարարված Ապրանքի որակի և սույն պայմանագրով նախատեսված պահանջների պահպանման համար:

5.2. Սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Մատակարարից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի գնի 0,05 %-ի չափով:

5.3. Սույն պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետը խախտելու դեպքում Մատակարարից յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ պայմանագրի չկատարված մասի գնի 0.05%-ի չափով:

5.4. Սույն պայմանագրի 5.2. և 5.3. կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ապրանքի համար Մատակարարին վճարման ենթակա գումարներից:

5.5. Գնորդի կողմից սույն պայմանագրի 4.2. կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 %-ի չափով:

5.6. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ ձևով կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7. Տուգանքի և տույժի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Սույն պայմանագրով պարտավորությունների ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 /երեք/ ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին գրավոր տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

7.2. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

7.3. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.4. Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

7.5. Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտատեր կողմի գրավոր համաձայնության:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| ԳՆՈՐԴ | ՄԱՏԱԿԱՐԱՐ |
|---|---|
| ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե<br>ք. Երևան, Մ.Խորենացու-7<br>ՀՀ ֆինանսների նախարարության<br>աշխատակազմի գործառնական վարչություն<br>Հ/Հ 900013574018<br>ՀՎՀՀ 02591206<br><br>ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավար՝<br>Ա.Մեղրակյան | |

Հավելված N-1
« » « » 2009թ. կնքված
«ԱՊՁԲ-47» ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

## Հուշանվեր ժամացույցերի մատակարարման

| Հ/Հ | Ապրանքի անվանումը | Տեխնիկական բնութագիր | Չ/մ | Քանակը | Միավորի գինը | Գումարը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Հուշանվեր ժամացույց-1 | Ձեռքի շվեյցարական ժամացույցներ «Breitling» մակնիշի կամ համարժեքը, Անվանումը՝ Colt Quartz,, Նյութը՝ պողպատ, Կորպուսի ձևը՝ կլոր, Կորպուսի չափսը ՝41.10 մմ, Կորպուսի հաստությունը՝ 13.30 մմ, Կալիբրի տեսակը՝ կվարցային, Կալիբր ՝ B74, Ապակին՝ սափֆիր, Ջրադիմացկունությունը՝ 500 մ, Ապարանջանը՝ պողպատ | հատ | 5 | | |
| 2 | Հուշանվեր ժամացույց-2 | Ձեռքի շվեյցարական ժամացույցներ «Breitling» կամ համարժեքը, անվանումը՝ Chrono Colt, Նյութը՝ պողպատ, Կորպուսի ձևը՝ կլոր, Կորպուսի չափսը ՝41.10 մմ, Կորպուսի հաստությունը՝ 12.90 մմ, Կալիբրի տեսակը՝ կվարցային, Կալիբր ՝ B73, Ապակին՝սափֆիր, Ջրադիմացկունությունը՝ 200 մ, Ապարանջանը՝ կաուչուկ | հատ | 10 | | |
| 3 | Հուշանվեր ժամացույց-3 | Ձեռքի շվեյցարական ժամացույցներ «Breitling» մակնիշի կամ համարժեքը, Անվանումը՝ Colt Oceane – կանացի, Նյութը՝ պողպատ, Կորպուսի ձևը՝ կլոր, Կորպուսի չափսը ՝33.80 մմ, Կորպուսի հաստությունը՝ 12,60 մմ, Կալիբրի տեսակը՝ կվարցային, Կալիբր ՝ B77, Ապակին՝սափֆիր, Ջրադիմացկունությունը՝ 500 մ, Ապարանջանը՝ պողպատ | հատ | 5 | | |
| | Ընդամենը՝ | | | | | |

| ԳՆՈՐԴ | ՄԱՏԱԿԱՐԱՐ |
|---|---|
| ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե<br>ք. Երևան, Մ.Խորենացու-7<br>ՀՀ ֆինանսների նախարարության<br>աշխատակազմի գործառնական վարչություն<br>Հ/Հ 900013574018<br>ՀՎՀՀ 02591206<br><br>ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավար՝<br>Ա.Մեղրակյան | |

18.12.09թ

ՀՀ ԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

ՊՐՆ Ա.ՍԵՂՐԱԿՅԱՆ

Հարգելի պարոն Սեղրակյան

Ի պատասխան Ձեր 17.12.09թ. թ.33402/18 գրության՝ սույնով հավաստում ենք, որ «Տերմինալ Պահեստ» ՍՊԸ-ն

- ունի գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, մասնագիտական հատկանիշներ, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ,
- դատական կարգով անվճարունակ չի ճանաչվել, լուծարման գործընթացում չի գտնվում, պայմանագրի կատարման համար անհրաժեշտ գույքը արգելանքի տակ չի գտնվում,
- կամ նրա ղեկավար մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում՝

1. դատապարտված չի եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար,
2. գնման պայմանագիր կնքելու նպատակով չի ներկայացրել կեղծ տվյալներ,
3. իր գործողությամբ կամ անգործությամբ չի խախտել գնման պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրած լինի պատվիրատուի կողմից գնման պայմանագրի միակողմանի լուծմանը:

«Տերմինալ Պահեստ» ՍՊԸ-ն հայտնում է իր համաձայնությունը Ձեր վերոհիշյալ գրության մեջ նշված հուշանվեր ժամացույցերը մատակարարելու համար:

Հուշանվեր ժամացույցերի մատակարարման ընդհանուր գումարը կկազմի 21261000 /քսանմեկ միլիոն երկու հարյուր վաթսունմեկ հազար/ ՀՀ դրամ:

«Տերմինալ Պահեստ» ՍՊԸ Տնօրեն՝ ...ունյան

# ՀԱՎԱՍՏՈՒՄ

| Հ/Հ | Ապրանքի անվանումը | Տեխնիկական բնութագիր | Չ/մ | Քանակը |
|---|---|---|---|---|
| 1 | Հուշանվեր ժամացույց-1 | Ձեռքի շվեյցարական ժամացույցներ «Breitling» մակնիշի,, Անվանումը՝ Colt Quartz,, Նյութը՝ պողպատ, Կորպուսի ձևը՝ կլոր, Կորպուսի չափը ՝41.10 մմ, Կորպուսի հաստությունը՝ 13.30 մմ, Կալիբրի տեսակը՝ կվարցային, Կալիբր ՝ B74, Ապակին՝ սափֆիր, Ջրադիմացկունությունը՝ 500 մ, Ապարանջանը՝ պողպատ | հատ | 5 |
| 2 | Հուշանվեր ժամացույց-2 | Ձեռքի շվեյցարական ժամացույցներ «Breitling», անվանումը ՝ Chrono Colt, Նյութը՝ պողպատ, Կորպուսի ձևը՝ կլոր, Կորպուսի չափը ՝41.10 մմ, Կորպուսի հաստությունը՝ 12.90 մմ, Կալիբրի տեսակը՝ կվարցային, Կալիբր ՝ B73, Ապակին՝սափֆիր, Ջրադիմացկությունը՝ 200 մ, Ապարանջանը՝ կաուչուկ | հատ | 10 |
| 3 | Հուշանվեր ժամացույց-3 | Ձեռքի շվեյցարական ժամացույցներ «Breitling» մակնիշի, Անվանումը՝ Colt Oceane – կանացի, Նյութը՝ պողպատ, Կորպուսի ձևը՝ կլոր, Կորպուսի չափը ՝33.80 մմ, Կորպուսի հաստությունը՝ 12.60 մմ, Կալիբրի տեսակը՝ կվարցային, Կալիբր ՝ B77, Ապակին՝սափֆիր, Ջրադիմացկունությունը՝ 500 մ, Ապարանջանը՝ պողպատ | հատ | 5 |

Վերոգրյալ ժամացույցերը հանդիսանում են Շվեյցարիայի արտադրության:

«Տերմինալ Պահեստ» ՍՊԸ Տնօրեն՝ Հ.Մանուկյան

18.12.09թ.

## ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N -ԱՊՁԲ-47
## Հուշանվեր ժամացույցերի մատակարարման

ք. Երևան

«18» դեկտեմբերի 2009թ.

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն, այսուհետ՝ «Գնորդ», ի դեմս ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա.Սեդրակյանի, մի կողմից, և «Տերմինալ Պահեստ» ՍՊԸ-ն, այսուհետ՝ «Մատակարար», ի դեմս տնօրեն Հ.Մանուկյանի, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

1.1 Մատակարարը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին հանձնել սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող թիվ 1 հավելվածով նախատեսված հուշանվեր ժամացույցեր՝ /այսուհետև՝ «Ապրանք»/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ ապրանքը և վճարել դրա համար:

1.2. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված ապրանքի մատակարարման ժամկետն է պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 29.12.2009թ. ներառյալ:

1.3. Մատակարարի կողմից Գնորդին մատակարարված Ապրանքը պետք է լինի չօգտագործված:

## 2.ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1. Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1. Ցանկացած ժամանակ ստուգել Մատակարարի կողմից Ապրանքի մատակարարման ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Մատակարարի գործունեությանը.

2.1.2. Միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Մատակարարի կողմից մատակարարված Ապրանքը չի համապատասխանում սույն պայմանագրի թիվ 1 հավելվածով նախատեսված պահանջներին և /կամ/ խախտվել է Ապրանքի մատակարարման ժամկետը և Ապրանքը չի կարող մատակարարվել Գնորդի համար ընդունելի ժամկետում:

2.1.3. Չընդունել Ապրանքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին համապատասխան, սույն պայմանագրի 1.1. կետի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անվճար վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Մատակարարից վճարելու սույն պայմանագրի 5.2. և 5.3. կետերով նախատեսված տուգանքը և տույժը:

2.1.4. Մինչև Ապրանքը Գնորդին մատակարարելը հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ Մատակարարին հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները՝ այդ մասին առնվազն 10 օր առաջ տեղեկացնելով Մատակարարին:

2.1.5 Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների կատարման վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև սույն պայմանագրի կնքումը Մատակարարը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ) կամ Մատակարարին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, ապա, այդ հիմքերը ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել սույն գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև սույն պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային սույն պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Մատակարարի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Մատակարարը պարտավոր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել Պատվիրատուի կրած վնասները, այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը սույն պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

**2.2. Գնորդն պարտավոր է՝**

2.2.1. Ուսումնասիրել և ընդունել սույն պայմանագրի պահանջներին համապատասխան մատակարարված Ապրանքը, իսկ մատակարարման արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Մատակարարին:

2.2.2. Մատակարարին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ այդ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5. կետով նախատեսված տույժը:

**2.3. Մատակարարն իրավունք ունի՝**

2.3.1. Գնորդից պահանջել ընդունելու սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքը:

2.3.2. Մինչև Գնորդին Ապրանքի մատակարարելը, հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ Գնորդին հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները՝ այդ մասին առնվազն 10 օր առաջ տեղեկացնելով Գնորդին:

2.3.3. Գնորդի կողմից սույն պայմանագրի 4.2. կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Գնորդից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 5.5. կետով նախատեսված տույժը:

**2.4. Մատակարարն պարտավոր է՝**

2.4.1. Սույն պայմանագրով սահմանված պայմաններով ապահովել Ապրանքի մատակարարումը՝ ղեկավարվելով ՀՀ գործող օրենսդրությամբ:

2.4.2. Սույն պայմանագրի 2.1.2. կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Գնորդին պատճառված վնասները:

2.4.3. Սույն պայմանագրի 2.1.3. կետով նախատեսված դեպքում Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում անվճար ապահովել թերությունների վերացումը և Գնորդին վճարել պայմանագրի 5.2. կետով նախատեսված տուգանքը:

2.4.4. Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2. և 5.3. կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

## 3. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Մատակարարը Ապրանքի մատակարարման ավարտից հետո հաջորդ աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ:

3.2. Գնորդն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Մատակարարին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.3. Մատակարարի կողմից մատակարարված Ապրանքն Գնորդի կողմից ընդունված է համարվում հանձնման-ընդունման արձանագրությունը երկկողմանի ստորագրելու/հաստատելու/ պահից:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ և ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Սույն պայմանագրի ընդհանուր գինը , ներառյալ ԱԱՀ-ն, կազմում է **21261000 /քսանմեկ միլիոն երկու հարյուր վաթսունմեկ հազար/ ՀՀ դրամ:** Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարման ապահովելու նպատակով իրականացվող բոլոր ծախսերը, այդ թվում՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հարկերը, պարտադիր այլ վճարները:

4.2. Գնորդը ապրանքի դիմաց Մատակարարին վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Մատակարարի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա ՝ հինգ բանկային օրվա ընթացքում:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Մատակարարը պատասխանատվություն է կրում մատակարարված Ապրանքի որակի և սույն պայմանագրով նախատեսված պահանջների պահպանման համար:

5.2. Սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Մատակարարից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի գնի 0,05 %-ի չափով:

5.3. Սույն պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետը խախտելու դեպքում Մատակարարից յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ պայմանագրի չկատարված մասի գնի 0.05%-ի չափով:

5.4. Սույն պայմանագրի 5.2. և 5.3. կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ապրանքի համար Մատակարարին վճարման ենթակա գումարներից:

5.5. Գնորդի կողմից սույն պայմանագրի 4.2. կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 %-ի չափով:

5.6. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ ձևով կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7. Տուգանքի և տույժի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Սույն պայմանագրով պարտավորությունները ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 /երեք/ ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին գրավոր տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

7.2. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

7.3. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.4. Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

7.5. Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտատեր կողմի գրավոր համաձայնության:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

**ԳՆՈՐԴ**

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-7
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900013574018
ՀՎՀՀ 02591[illegible]

ՀՀ ԿԱ [illegible] աշխատակազմի ղեկավար՝
Ա.Սե[illegible]

**ՄԱՏԱԿԱՐԱՐ**

«Տերմինալ Պահեստ» ՍՊԸ
ք.Երևան, Սայաթ-Նովա 19/9
«Ինեկոբանկ» ՓԲԸ

Հ/Հ 205002213929
ՀՎՀՀ 01551438

Տնօրեն՝ [illegible]

Հավելված N-1
«18» «12» 2009թ. կնքված
«ԱՊՋԲ-47» ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ
## Հուշանվեր ժամացույցերի մատակարարման

| Հ/Հ | Ապրանքի անվանումը | Տեխնիկական բնութագիր | Չ/Մ | Քանակը | Միավորի գինը | Գումարը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Հուշանվեր ժամացույց-1 | Ձեռքի շվեյցարական ժամացույցներ «Breitling» մակնիշի,, Անվանումը՝ Colt Quartz,, Նյութը՝ պողպատ, Կորպուսի ձևը՝ կլոր, Կորպուսի չափսը ՝41.10 մմ, Կորպուսի հաստությունը՝ 13.30 մմ, Կալիբրի տեսակը՝ կվարցային, Կալիբր ՝ B74, Ապակին՝ սափֆիր, Ջրադիմացկունությունը՝ 500 մ, Ապարանջանը՝ պողպատ | հատ | 5 | 912000 | 4560000 |
| 2 | Հուշանվեր ժամացույց-2 | Ձեռքի շվեյցարական ժամացույցներ «Breitling», անվանումը ՝ Chrono Colt, Նյութը՝ պողպատ, Կորպուսի ձևը՝ կլոր, Կորպուսի չափսը ՝41.10 մմ, Կորպուսի հաստությունը՝ 12.90 մմ, Կալիբրի տեսակը՝ կվարցային, Կալիբր ՝ B73, Ապակին՝սափֆիր, Ջրադիմացկունությունը՝ 200 մ, Ապարանջանը՝ կաուչուկ | հատ | 10 | 1134300 | 11343000 |
| 3 | Հուշանվեր ժամացույց-3 | Ձեռքի շվեյցարական ժամացույցներ «Breitling» մակնիշի, Անվանումը՝ Colt Oceane – կանացի, Նյութը՝ պողպատ, Կորպուսի ձևը՝ կլոր, Կորպուսի չափսը ՝33.80 մմ, Կորպուսի հաստությունը՝ 12.60 մմ, Կալիբրի տեսակը՝ կվարցային, Կալիբր ՝ B77, Ապակին՝սափֆիր, Ջրադիմացկունությունը՝ 500 մ, Ապարանջանը՝ պողպատ | հատ | 5 | 1071600 | 5358000 |
| Ընդամենը՝ | | | | | | 21261000 |

**ԳՆՈՐԴ**

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-7
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900013574018
ՀՎՀՀ 0259[illegible]

ՀՀ ԿԱ [illegible] աշխատակազմի ղեկավար՝
Ա.Մ[illegible]

**ՄԱՏԱԿԱՐԱՐ**

«Տերմինալ Պահեստ» ՍՊԸ
ք.Երևան, Սայաթ-Նովա 19/9
«Ինեկոբանկ» ՓԲԸ

Հ/Հ 205002213929
ՀՎՀՀ 01551438

Տնօրեն Հ. Մանուկյան

# ՀԱՎԱՍՏՈՒՄ

| Հ/Հ | Ապրանքի անվանումը | Տեխնիկական բնութագիր | Չ/մ | Քանակը |
|---|---|---|---|---|
| 1 | Հուշանվեր ժամացույց-1 | Ձեռքի շվեյցարական ժամացույցներ «Breitling» մակնիշի,, Անվանումը՝ Colt Quartz,, Նյութը՝ պողպատ, Կորպուսի ձևը՝ կլոր, Կորպուսի չափսը ՝41.10 մմ, Կորպուսի հաստությունը՝ 13.30 մմ, Կալիբրի տեսակը՝ կվարցային, Կալիբր ՝ B74, Ապակին՝ սափֆիր, Ջրադիմացկունությունը՝ 500 մ, Ապարանջանը՝ պողպատ | հատ | 5 |
| 2 | Հուշանվեր ժամացույց-2 | Ձեռքի շվեյցարական ժամացույցներ «Breitling», անվանումը ՝ Chrono Colt, Նյութը՝ պողպատ, Կորպուսի ձևը՝ կլոր, Կորպուսի չափսը ՝41.10 մմ, Կորպուսի հաստությունը՝ 12.90 մմ, Կալիբրի տեսակը՝ կվարցային, Կալիբր ՝ B73, Ապակին՝սափֆիր, Ջրադիմացկունությունը՝ 200 մ, Ապարանջանը՝ կաուչուկ | հատ | 10 |
| 3 | Հուշանվեր ժամացույց-3 | Ձեռքի շվեյցարական ժամացույցներ «Breitling» մակնիշի, Անվանումը՝ Colt Oceane – կանացի, Նյութը՝ պողպատ, Կորպուսի ձևը՝ կլոր, Կորպուսի չափսը ՝33.80 մմ, Կորպուսի հաստությունը՝ 12.60 մմ, Կալիբրի տեսակը՝ կվարցային, Կալիբր ՝ B77, Ապակին՝սափֆիր, Ջրադիմացկունությունը՝ 500 մ, Ապարանջանը՝ պողպատ | հատ | 5 |

Տվյալ բնույթով տեղական արտադրության ապրանքների ձեռքբերումը հնարավոր չէ և այդ ապրանքները հանդիսանում են Շվեյցարիայի արտադրության ապրանքներ:

Հայտարարությունը հանդիսանում է գնման ընթացակարգի արձանագրության մաս:

Պա[illegible] ստորաբաժանման ղեկավար՝